

ՎԵՐԱԴԱՐՁ ԼԻՈՆ

Նույն օրը, ժամը 14-ին, Վեհափառ Հայրապետը Դեսինից վերադարձավ Լիոն:

Ժամը 13.30-ին լիոնահայ ծանոթ ազգայիններից պրն. Նապոլեոն Պուլլուքյանը քաղաքի հայտնի ռեստորաններից մեկում, ի պատիվ Հայոց Հայրապետի, տվեց ճաշկերույթ, որին ներկա էին նաև Լիոնի քաղաքագլուխը, քաղաքապետական խորհրդի անդամները, նահանգապետի ներկայացուցիչը, պետական այլ բարձրաստիճան պաշտոնատարներ, ինչպես նաև Լիոնի հայոց կրոնական ընկերակցության և ազգային միության վարչության բոլոր անդամները:

Ժամը 17-ին Վեհափառ Հայրապետը հյուրանոցի Իր հարկաբաժնում ընդունեց Լիոնի թերթերի և ռադիոթղթակիցների այցելությունը և մամուլի ասուլիս ունեցավ նրանց հետ:

Ժամը 18-ին Հայոց Հայրապետը ընդունեց նաև «Հայ դատի պաշտպանության կոմիտե»-ի Լիոնի շրջանի մի խումբ ներկայացուցիչների և զրույց ունեցավ նրանց հետ:

ՀՐԱԺԵՇՏԻ ՄԵԾ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԼԻՈՆՈՒՄ

Ժամը 20.30-ին Լիոնի «Շալե դյու Պարկ»-ում Լիոնի հայոց կրոնական ընկերակցության վարչությունը Հայոց Հայրապետի պատվին տվեց ողջերթի մեծ ճաշկերույթ, որին հրավիրվել էին նաև Լիոնի և նրա շրջակայքի մեծահարգ բոլոր քաղաքագլուխները, նահանգապետարանի և քաղաքային իշխանությանց բարձր աստիճանավորները, ինչպես նաև ֆրանսիացի և հայ բազմաթիվ հյուրեր՝ ավելի քան 300 հոգի:

Ընդունելության ժամանակ Հայոց Հայրապետին ուղղյալ ողջերթի ջերմ ու սրտագին ճառեր արտասանվեցին՝ բարի ճանապարհ մաղթելով Նրան:

Ստեղծված բացառիկ ու խանդավառ մթնոլորտում խոսք առավ նաև Հայոց Հայրապետը, Որը նախ Իր խորազգաց շնորհակալությունն ու երախտագիտությունը հայտնեց ասպետական Ֆրանսիայի բարեխնամ կառավարության և նրա պետական ու քաղաքային իշխանությունների ցույց տված բարձր ուշադրության համար հարավային և կենտրոնական Ֆրանսիա կատարած հովվապետական Իր այցելության առթիվ:

ԳԱՌՋՈՒ—ՓԱՐԻԶԻ ԱՍՏՎԱԾԱՄՈՐ ՏԱՃԱՐԸ



Այնուհետև Հայոց Հայրապետը եղբայրական Իր ջերմ շնորհակալությունը հայտնեց այդ շրջանների կաթոլիկ եկեղեցու բարձրաստիճան հոգևորականներին և քույր եկեղեցիների այլ ներկայացուցիչներին, որոնց հետ Ինքն ունեցել էր օգտակար և հաճելի էկումենիկ տեսակցություններ և զրույցներ մեր օրերին քրիստոնեական եկեղեցիները շահագրգռող կարևոր մի շարք հարցերի շուրջ:

Հրաժեշտի Իր խոսքում Վեհափառ Հայրապետը հայտնեց նաև Իր գոհունակությունն ու մխիթարությունը՝ Իր այցելած բոլոր վայրերում տեսնելով Իր հոգևոր զավակների սերն ու հավատարմությունը դեպի Մայր Աթոռ ս. Էջմիածինը, նրանց եկեղեցական, մշակութային կյանքի կազմակերպվածությունը ու նրանց բարօր, բարգավաճ և ապահով կյանքը իրենց երկրորդ հայրենիքում, որ Ֆրանսիան է: